

ՆԱՄԱԿՆԵՐ Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ

Գիտական ասպարեզ մտնելով 1930-ական թվականներին՝ Մ. Գ. Ներսիսյանը անմնացորդ նվիրումով լծվեց Հայագիտության զարգացման ծանր գործին, ունեցյալ բեղմնավոր դիտահետազոտական գործունեություն, ծավալեց գիտակրթական ու դիտակազմակերպչական հսկայածավալ աշխատանք, եղավ «Պատմա-բանասիրական հանդեսի» հիմնադիրը և 40 տարի անընդմեջ նրա խմբագիրը՝ «Հանդեսի» շուրջ համախմբելով հայ և օտարազգի բազում հայագետներին: Պատմա-տոնավարության տարբեր տարիներին նա բազմաթիվ գրագրություններ է ունեցել Հայագիտության խոշոր երախտավորների հետ, ստացել նրանց աջակցությունը իր ծրագրերի իրագործման համար և միաժամանակ սատար կանգնել նրանց գիտաստեղծագործական գործունեությանը:

Մ. Գ. Ներսիսյանի անձնական արխիվում պահպանվել են իրեն ուղղված նշանավոր շատ հայագետների նամակներ, որոնք ուշադրավ սեղեկություններ են պարունակում նամակների հեղինակների կյանքի ու գործունեության մասին:

Ակադ. Մ. Գ. Ներսիսյանի առանձնակի ուշադրության և մտահոգության առարկան էր «Պատմա-բանասիրական հանդեսը», որի սուլարտնային ծախսերը հայթայթելու առումով վերջին տարիներին ստեղծվել էին լուրջ գծավարություններ: Մ. Գ. Ներսիսյանի խնդրանքին սիրահոգարար արձագանքեց դոկտոր Զավեն Ելավյանը: Գալուստ Գյուլպենկյան հիմնադրամի հայկական բաժանմունքը իր հովանու տակ առավ «Հանդեսը»: Նամակների հրատարակումը եղրավակում է այն նամակը, որը ակադ. Մ. Գ. Ներսիսյանը մահվանից տաս օր առաջ (28.1.1999) հղել էր դոկտ. Զ. Ելավյանին:

Ներսիսյանի արխիվը բարեխղճությամբ մշակել է Ն. Դերոյանը:

Ստորև հրատարակվում է այդ մեծարժեք նամակագրության մի մասը:

Նամակների բնագրերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում՝ Մ. Գ. Ներսիսյանի անձնական ֆոնդում:

ՆՈՒՆԵ ԴԵՐՈՅԱՆ
ՊԱՎԵԼ ԶՈԲԱՆՅԱՆ

Հարգելի ընկ. Մ. Ներսեսյան.

Ձեր՝ 21.VIII թվակիր նամակն ու ծրարը Մ. Աբեղյանի և Ս. Տեր-Ավետիսյանի գրքերով ստացա, որի համար շտապում եմ հայտնել Ձեզ խորին շնորհակալություն:

Ուղարկում եմ Ձեզ 1940-41 ակադ. թվին կարգացվելիք զեկուցումներին և նախադրական ցանկը: Խնդրում եմ ընտրություն անեք և հաղորդեք առաջին հերթին ո՞ր նյութի մասին կցանկանայիք ինձ լսել: Ուղարկում եմ

* Նամակագիրները երբեմն օգտագործում են ազգանվան նշված ձևը:

նաև առանձին ծրարով «Արշավ»-ի № 2-ը և իմ հրատարակած «Հայերեն ձևագրացուցակների բիբլիոգրաֆիա»-ն:

Երևան իմ գալու մասին առաջիկա ոչինչ չեմ կարող գրել, քանի որ Պետ. Համալսարանում և Հայկական Ազգերը. ինստիտուտում գասացուցակը գեռ կազմված չէ և չգիտեմ, թե շաբաթվա ո՞ր օրերն են ինձ համար ազատ: Հենց որ պարզվի, կտեղեկացնեմ:

Հայաստան գալս կուզեի օգտագործել 2 նստատեղի բռնելու համար: Առաջինը Ձեզ հայտնի է, իսկ երկրորդն այն է, որ պետք եմ զգում մի քանի ժամով գիտելի Դարաչիչազ-Կեչարիս և Օշական տեղական հնագիտական օբյեկտները ստուգելու համար: Կարո՞ղ էր, արգյոք ԱրմՖանի նախագահությունը տրամադրել իր մեքենան...

Ցանկալի կլիներ, որ «Տեղեկագրի» մեջ տպվող հոդվածների մի-մի սրբագրությունն ուղարկվեր ինձ աչքի անցկացնելու:

Մի խնդիր ևս: Կարո՞ղ եք արգյոք ուղարկել ինձ 1939 թ. ԱրմՖանի հրատարակած գիրքը՝ Н. Марр. Ани:

Հարգանքներով Լևոն Մելիքսեթ-Բեկ
Тифлис, Московская 3
Л. М. Меликсет-Беку

1. Մաշտոց-Մեսրոպը և նրա գործունեությունն ըստ հույն-բյուզանդական և վրացական աղբյուրների (Մաշտոցի հոբելյանի կապակցությամբ):
2. «Նորագյուտ» կեղծ-աղվանից այբբենը (քննադատական). (նույն հոբելյանի կապակցությամբ):
3. Ղ. Աղայանը և Սամչվիլիզեի նախապատմական ու ֆեոդալական-հայկական հնությունները (Աղայանի հոբելյանի կապակցությամբ):
4. Նուրինի երգն ըստ Պոռոյանի և վրացական ֆոլկլորն ու համեմատական ազգագրությունը (Նալբանդյանի «Կրիտիկա»-ի հրատարակության առթիվ):
5. Խոսրով և Շիրին վեսլի Նախա-Նիդամյան և ետ-Նիդամյան Հայ-վրացական վերսիանները և Սասունցի Դավիթը (Նիդամի հոբելյանի կապակցությամբ):
6. «Գիրք թղթոց»-ի ամբողջացման կամ թերի մասերի վերականգնման մի փորձ նորագյուտ ձեռագրի առնչությամբ:
7. Հայ պատմիչների վրացական վերսիանները՝ Աղաթանդեղոս, Բյուզանդ, Փարպեցի, Խորենացի, Սեբեոս, Օրբելյան և այլն:
8. 1352 թ. չորս լեզվանի հազվագյուտ արձանագրությունը Վրաստանում և նրա գիտական արժեքը:
9. Չորրորդ Հայքի Տուտիսի գյուղացիական ապստամբությունը VIII դարու 70-ական թվականներին ըստ ասորական աղբյուրի:
10. Հայկական հնությունները Բեսարաբիա-Բուկովինայում և Թոխաթեցի զուլգ եղերերգուները:

11. 1795 թ. Թբիլիսիի ավերումն ու Հաջորդող գեպքերը Համաձայն նորագյոււա անանուն Հայ պատմիչի և Հայ-լրացական Հիշատակարանների՝ Սայաթ-Նովայի մահվան սլոբոլեմի առնչութեամբ:
12. Հայկական արձանագրութիւնները Վրաստանում:
13. Վրացական արձանագրութիւնները Հայաստանում:
14. Տերմին «Բարթովելի»-ի մասին (քննադատական):
15. Կորիկե-քորիկողների իշխանութիւնը Լոռի-Տաշիրում, Հերեթում և Կախեթում:
16. Վրաստանի որձաքար-վիշապները և նրանց գիտական նշանակութիւնը:

2

11 սեպտեմբերի 1940

Թբիլիսի

Հարգելի ընկ. Մ. Ներսիսյան.

Ամիրտովլաթի «Օգուտ բժշկութեան» գիրքը-40 մամուլ, մի ամսից ավելի է, որ տպագրված է, բացի վերջին կես մամուլից, որի մեջ պետք է գրվի գլավիտի №-ը: Այստեղ այդ մամուլի տպագրութեան արգելում են, որովհետև այդտեղից աղատված №-ը երեք ամսվա ուժ ունեւու է: Բայց որովհետև տպագրութիւնն ավելի երկար տևեց պետք է այդտեղից նոր № ուղարկեն կամ Համապատասխան կարգադրութիւն անեն: (Ես գլավիտի №-ի հարցին լավ տեղյակ չեմ, ուստի չեմ կարող ավելի մանրամասն բացատրել. բայց ձեզ մոտ հրատարակչական բաժնում ավելի լավ կհասկանան, թե բանը ինչումն է և ի՛նչ պետք է անել): Վերոհիշյալի մասին այստեղից քանիցս անգամ գրել են, հեռախոսել են, հեռագրել են հրատարակչական բաժնի վարիչ ընկ. Հ. Կարապետյանին. հեռագրել է նրան նաև տպարանի վարիչը, բայց բոլոր այս գիմումները մնացել են առանց պատասխանի, և գիրքը ահա այսպես անտեր մնում է մի ամսից ավելի:

Ինչով բացատրել ընկ. Հ. Կարապետյանի այս լուռութիւնը՝ այստեղ մեզ հայտնի չէ. գուցե նա բացակա է Երևանից. բայց չէ՞ որ գործը չի կարող կանգ առնել, չէ՞ որ մեկը նրան փոխարինող կլինի, որ պարտավոր է ընթացիկ գործերին ընթացք տալ:

Հրատարակչական բաժնից անմիջապես պատասխան ստանալու հույսերս կտրած սրանով Ձեզ եմ դիմում, Հարգելի ընկ. Ներսիսյան, խնդրելով, որ նեղութիւն կրեք հրատարակչական բաժնին բացատրեք այս ցավալի եղելութիւնը և արագացնեք գլավիտի պահանջած №-ի առաքումը կամ Համապատասխան կարգադրութիւն, որպեսզի գիրքը տպագրութեամբ վերջանա և լույս տեսնի:

Հույս ունեմ արգեն ստացած կլինեք իմ ուղարկած երկու ապահոված նամակները, մեկը «Խորենացու առեղծվածի շուրջը» գրվածքիս ուսերեն բովանդակութեամբ և մյուսը իմ գրավոր աշխատութիւնների ցուցակով:

Հարգանքներով մնում եմ առ Ձեզ

Ստ. Մալխասյանց

3

13 ապրիլի 1941

Թբիլիսի

Հարգելի ընկ. Մկրտիչ

Հայտնում եմ խորին շնորհակալությունս ինձ ուղարկած «Գիտական ժողովածու (XX)»-ի և օտտիսկների համար:

Հուսով եմ, որ նույն կարգով շուտով կստանամ և «Տեղեկագրի» №1 (7)-ը և համապատասխան արտատպությունները:

Առանձին ծրարով ուղարկում եմ վերջին աշխատություններիցս մեկը, որ խնդրում եմ բաշխել ըստ սլատկանելույն համաձայն մակագրության:

Օգտվելով առիթից խնդրում եմ հասցնել ինձ գրելու թուղթ՝ «Վրաց ազդյուրները Հայաստանի և Հայերի մասին» աշխատության III (և IV) հատորների համար: Այստեղ, դժբախտաբար մեծ քանակով թուղթ չեմ կարողանում գտնել, որպեսզի սկսած գործս շարունակեմ և նշած ժամկետին հասցնեմ այն Ձեզ (չնայած որ ոչ մի իրավական փաստաթղթով մեր պայմանագիրը վավերացրած չէ):

Խորին հարգանքք Լ. Մելիքսեթ-Բեկ

4

24 մայիսի 1941

Թբիլիսի

Մեծահարգո ընկ. Ներսիսյան.

Երևանի համալսարանի հրավերով մայիսի 31-ին լինելու եմ Երևանում, ուր կմնամ երկու օր: Կուզեի օգտվելով առիթից իրազեկ գարձների Ձեզ աշխատությանս «Վրաց ազդյուրները Հայաստանի և Հայերի մասին» Գ հատորի մշակման ընթացքի մասին, քանի որ 5-6 մամուլի չափ նյութն արգեն պատրաստ ունիմ (գուցե և հետս բերեմ): Կուզեի նաև, որ իմ գալու մասին տեղեկացնելիք հրատարակչությանը (սրբագրիչներ Տուրաբովին և Տոնյանին)՝ գուցե «ԱրմՖանի Տեղեկագրի» 1941 թ. №2,3 և այլն համարներում գետեղելիք հոդվածներիս (5-ի չափ) սրբագրությունների կապակցությամբ հարցեր լինեն և այլն:

Հարգանքներով Լ. Մելիքսեթ-Բեկ

5

19 հունվարի 1944

Երևան

Սիրելի ընկ. Ներսիսյան.

Կարգացի ընկ. Պապովյանի դրվածքը Գունդստապլի մասին: Ծայրից ծայր գովասանք է: Ուրախ եմ, որ այդ կարծիքն է հայտնում: Գնահատելի անձինք միայն կարող են լավ գնահատել. տգետը միշտ կծու քննադատ է: Մի կետում միայն հեղինակից տարբեր կարծիք ունի և իրավունք է ուզում հեղինակից՝ այդ մի կետը փոխելու: Ես հեռախոսեցի հեղինակին և իմացա նրա կարծիքը: Նա ասում է. «Ես սկսնակ գրող եմ, պատրաստ եմ լսելու

բոլոր բարի խորհուրդները: Միևնույն ժամանակ ես աշակերտել եմ ընկ. Ներսիսյանին, որ ինձ լավ ճանաչում է: Եթե նա էլ ինձ չքաջալերի, ես ո՞ւմ պետք է դիմեմ»:

Այս խոսքերով նա լիովին Ձեզ և հարգելի ընկ. Պապովյանին է հանձնում վարվելու հոգվածի հետ այնպես ինչպես ցանկանում եք: Նույնը խնդրում եմ նաև ես:

Ձերդ՝ Հ. Աճառյան

Հ. Գ. Գրաբերիս հետ ուղարկում եմ Ձեզ Տեղեկ. №5 և Ձեկույցներ №1-4, որոնց այլևս կարիք չունեմ: Արեք ինչ որ Ձեզ հաճելի է:

6

28 մարտի 1944

[Երևան]

Հարգելի ընկ. Ներսեսյան.

Որոշեցի կարգալիքը ղեկուցում իմ ուսումնասիրության առաջին մասը, որը ուրույն մի ամբողջություն է: Ձեկուցմանս վերնագիրն է «Մեոտիս-Կողքիսյան ճանապարհը դեպի Մեդիա և նրա ռադմական ու առևտրական մեծ դերը»: Ձեկուցումս ուղղում եմ կարգալիք (հայերեն է) առավոտյան նիստերին Ակադեմիայի սեսիայի առաջին օրերին (եթե հնարավոր է կիրակի ապրիլի 9-ին): Խնդրում եմ, որ Ակադեմիան միջամտե, որ մեր բնակարանի էլեկտրական հոսանքը միացնեն, որպեսզի կարողանամ երեկոները աշխատել:

Հարգանքներով Հ. Մանանդյան

7

30 մարտի 1944

[Երևան]

Հարգելի ընկ. Ներսեսյան.

Խնդրում եմ հրավիրագրերի մեջ իմ զեկուցման վերնագիրը տպագրել տաք հետևյալ խմբագրությամբ

Մեոտիս-Կողքիսյան հին ճանապարհը Հայաստանի վրայով Մեդիա և նրա պատմական ու առևտրական մեծ դերը.

Меотийско-Колхидская древняя дорога через Армению в Мидию и ее крупная историческая и торговая роль.

Հարգանքներով Հ. Մանանդյան

8

22 հոկտեմբերի 1944

[Երևան]

Հարգելի ընկ. Ներսիսյան.

Հանձնելով Պատմության ինստիտուտին Հովսեփի Էմինի ինքնակենսագրության թարգմանությունը, հարկ եմ համարում հաղորդել հետևյալը.

Թարգմանութիւնը կատարված է ինձ համար երկու նվագ՝ 1918 թվին և 1925 թվին:

Թարգմանութիւն վրա աշխատել է նախապես գրականագետ Ստ. Տեր Սարգսյանը՝ Խ. Աբովյանի «Երկերի» 1897 թ. հրատարակութիւն խմբագրողը: Տեր Սարգսյանը կատարել է թարգմանութիւնը էմիինի "The life and adventures"-ի առաջին տպագրութիւն հիման վրա:

1922 թվի բնագրի երկրորդ հրատարակութիւնից հետո անհրաժեշտ եղավ ընդարձակել Տեր Սարգսյանի թարգմանածը նոր հրատարակութիւն յրացումներով: Այդ աշխատանքը կատարեց Վ. Թոթովենցը:

Կարգալով գործի բնագիրը դժվար չէ համոզվել, որ էմիինը մտածել է Հայերեն ու պարսկերեն և գրել անգլերեն: Նրա նամակների մեջ նկատելի է լեզվական անվտուրութիւն. նամակագիրը չէր նախատեսում պարզապես, թե իր դրածները պիտի տպագրվեն երբևէ. նկատելի է մանավանդ հեղինակի անվարժութիւնը կետագրութիւն մեջ:

Մտածելով Հայերեն շատ հեշտ է հասկանալ այնուամենայնիվ էմիինի երկար, առանց կետագրական կանոնների, միջանկյալ նախադասութիւններով, անտեղի բառերով ու բացականչութիւններով լեցուն պարբերութիւնները:

Հեշտ չէ լինելու թարգմանութիւն խմբագրողի աշխատանքը: Պետք է խուսափել մանավանդ էմիինի մոդեռնացումից: Թարգմանութիւն լեզուն պետք է ըստ կարելույն պահպանի XVIII դարի կոլորիտը: Այդ նախատեսութիւնմբ է հենց, որ թարգմանութիւն հիմնական աշխատանքը հանձնարարեցի Տեր Սարգսյանին. վերջինս տիրապետում էր անգլերենին, պարսկերենին և դիտեր գրաբար: Նրա աշխարհաբարը ուներ արխայիկ երանգ, հիշեցնում էր մասամբ. «Սոս ու Վարդիթերի» լեզուն. թվում էր ինձ, որ այդ լեզվով էլ հենց պիտի կատարվեր էմիինի Հայացումը: Ժամանակին Պոռչյանը թարգմանել էր «Հարութիւն Արարատյանի կյանքը», մի գործ, որ ըստ ժամանակի ու երանգի շատ մոտ էմիինի ինքնակենսագրութիւնը:

Ինձ Հայտնի չեն Ձեր տրամագրութիւն տակ եղած նոր թարգմանութիւնները. թերևս սրանք ունեն իրենց առավելութիւնները: Թվում է, սակայն, որ եթե գրքի նոր թարգմանիչները չեն ղեկավարվել վերը նշված սկզբունքով, նպատակահարմար է հիմք ընդունել Տեր Սարգսյանի ու Թոթովենցի թարգմանութիւնները, որոնք, հարկավ, կարոտ են ուշագիւր խմբագրման թե իմաստի ճշտութիւն, թե ոճի սեղմութիւն ու հարազատութիւն տեսանկյունով. ոճի տեսանկյունով անկատար է մանավանդ Թոթովենցի թարգմանութիւնը, որը, բարեբախտաբար, բռնում է աշխատութիւն մի հինգերորդ մասը միայն:

Եթե Ձեր տրամագրութիւն տակ չկա անգլերեն առաջին հրատարակութիւնը, դժվար չէ գազափար կազմել նրա մասին, աչքի առաջ ունենալով Տեր Սարգսյանի թարգմանածը: 1918 և 1925 թվերի թարգմանութիւնները դժվար չէ տրոհել միմյանցից աչքի առաջ ունենալով թարգմանողների ձեռագրի տարբերութիւնները: Թարգմանութիւն սկիզբը, որ տպագրված է մեքենայով, կատարել է Թոթովենցը. դրան հաջորդող ձեռագիր էջերը նույնպես Թոթովենցինն են. Տեր Սարգսյանի թարգմանութիւնը

սկսվում է 20-րդ էջի միջից, որին հաջորդող էջերը տեղ-տեղ լրացված են թոթովենցի ձեռագրով:

Աշոտ Հովհաննիսյան

Հ. Գ. Ներկա թարգմանությունը առաջինը չէ: Առաջին թարգմանությունը երկու հատորով կատարել էր Պետրոս Տոնապետյանը արևմտահայ լեզվով: 1920-ական թվականներին լույս էր տեսնում գրքի թարգմանությունը «Ճակատամարտի» էջերում, թերթոնի ձևով: Արդյոք Տոնապետյանի թարգմանածն էր այդ, թե նոր թարգմանությունը, չգիտեմ: Տոնապետյանի թարգմանության մի նմուշը տալիս է Մուշեղ եպիսկոպոսը «Մանչեստրի հայ գաղութը» գրքի հավելվածում, Պոստոն, 1911, երկես] 262 և հետ.:

9

27 հունվարի 1946
Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԴԻՐԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ՆԵՐԱԵՍՅԱՆԻՆ

Հարգելի ընկ. Ներսեսյան.

Ի պատասխան Ձեր 25 հունվարի գրություն, այսու հայտնում եմ, որ վատ առողջությանս պատճառով, դժբախտաբար, անկարող եմ պարապել մասնագիտական առարկայի գծով ինստիտուտի ասպիրանտի հետ: Հայտնում եմ միաժամանակ, որ համաձայն Գիտությունների Ակադեմիայի Նախագահության 6 դեկտ. 1945 թվի որոշման, Ս. Պ. Լալափարսյանի գիտական ղեկավար հաստատված է Ս. Երեմյանը, որը և պետք է տա նրան կոնսուլտացիա:

Հ. Մանանդյան

10

17 փետրվարի 1945
Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ

Հարգելի ընկեր Ներսեսյան.

Երեկ ինձ հայտնեցին, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների [ակադեմիայի] պատմության ինստիտուտը մտադիր է ստալինյան պրեմիայի ներկայացնել իմ թեկնածությունը:

Այսու հայտնում եմ, որ եթե ներկայացվելու է պրեմիայի իմ «Տիգրան Բ. և Հռոմը» աշխատության ուսերեն թարգմանությունը՝ այդ միանգամայն անթույլատրելի է, անհարմար ու ավելորդ, որովհետև նույն աշխա-

* Որքան հիշում եմ՝ 1925–27 թթ. արանքում – Ա. Հ.:

** Այսպես է տեքստում:

տու թյան հայերենը ներկայացված է եղել պրեմիայի Միութենական Ակադեմիայի Պատմության ինստիտուտի կողմից 1941 թվին: Իբրև հին աշխատություն նա չէ կարող հարկավ Կոմիտեի կողմից քննության առնվի երկրորդ անգամ: Իսկ եթե ինստիտուտը դնելու է իմ թեկնածությունը իմ երկարատև գիտական գործունեության համար՝ այդ դեպքում ևս խնդրում եմ հանել իմ թեկնածությունը, որովհետև ես գերադասում եմ ստանալ պրեմիա իմ կոնկրետ նոր կապիտալ աշխատությունների համար, որ դժբախտաբար, երեք տարվա ընթացքում հնարավոր չեղավ այստեղ տպագրել:

Հ. Մանանդյան

11

11 փետրվ. 1946
Երևան

Հարգելի ընկ. Մ. Ներսիսյան.

Արտանց շնորհակալություն եմ հայտնում Ձեզ և պատմական ինստիտուտի այլ աշխատող ընկերներին – Լևոնյանին, Երեմյանին, Էլչիրեզյանին, Կարապետյանին և Ասլանյանին, Ձեր շնորհավորության համար այն բարձր պատվի առիթով, որին արժանացավ իմ բացատրական բառարանս Սով. կառավարության կողմից:

Այս բարձր պատիվը գերազանցեց իմ ամենամեծ ակնկալությունները:

Խորին հարգանքներով Ստ. Մալխասյանց

12

20 մարտի 1951
[Երևան]

Հարգելի ընկ. Ներսիսյան.

Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը Ձեր ջերմ աջակցության համար, որ սիրալիկ կերպով ցույց տվիք ինձ և հնարավոր դարձրիք իմ «Քննական տեսություն» երրորդ հատորի հրատարակությունը:

Իմ այս գրքի տպագրման հանձնումը ինձ հույս է ներշնչում, որ կկարողանամ հաջողությամբ ավարտել ու հրատարակել իմ ծրագրած աշխատանքի նաև մյուս մասերը: Շուտով սկսելու եմ գրել երկրորդ հատորի առաջին մասը՝ Արշակունիների հաստատումից մինչև մարդսպանության շրջանը (I-V գ.):

Ունիմ այժմ մի խնդիր ես, որ վերաբերվում է ոչ թե ինձ, այլ իմ նախկին ասպիրանտ և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի աշխատակից Լ. Ս. Խաչիկյանին:

Ինչպես հայտնի է Ձեզ, ընկ. Լ. Խաչիկյանը շնորհալի գիտնական է և հրատարակել է նորերս իբրև Ակադեմիայի ավագ գիտական աշխատակից կարևոր ու մնայուն մի աշխատություն՝ «ԺԴ գրքի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (Երևան, 1950): Նա գտնվում է այժմ բնակարանային անասելի ծանր պայմաններում: Շատ խնդրում եմ, որ աջակցեք ու միջնոր-

դեք, որ նրան հատկացնեն առնվազն երկու սենյակ Ակադեմիայի նոր կառուցվող շենքում:

Եթե այդ հնարավոր չլինի՝ դուցե կարելի լինի նրան տալ հարմար սենյակներ Ակադեմիայի նոր շենքը փոխադրվող գիտաշխատողների հին բնակարաններից մեկում:

Ընդունեցեք և հայտնեցեք նաև տիկին Ռոզային իմ սրտագին ողջունները:

Խորին հարգանքներով Հ. Մանանդյան

13

27 հունիսի 1951

Թբիլիսի

Մեծարգո ընկ. Մկրտիչ.

Նամակաբերը իմ նախկին աշակերտն է, երբեմն նա Թբիլիսիի հայ ազերը. ուսուցչական ինստիտուտի զիրեկտորը, «Ա.Վ.» թերթի խմբագիրը և այլ պատասխանատու պաշտոններ վարած, այժմ Թբիլիսիի Պուշկինի անվան Մանկավարժական ինստիտուտի գոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Սենեքերիմ Վարդանյանը:

Այս արձակուրդներին գալիս է Երեան տեղիս արխիվներում և հիմնարկներում աշխատելու նպատակով: Նյութն է՝ դոկտորական գիտատառցիսան, որի մասին մանրամասն ինքն կզեկուցի Ձեզ:

Դիմում եմ Ձեզ, իբրև ազնվագույն «աշակերտիս» և քաղաքացուն, աջակցել ինչով էլ հնարավոր կգտնեք:

Բարևներով՝ Ձեզ, հարգելի տիկին Ռոզային և «քուլփաթին»:

Ձեր Լ. Մելիքսեթ Բեկ

14

9 մայիսի 1955

Թբիլիսի

Մեծարգո ընկ. Մ. Ներսիսյան

Ընդունեցեք խորին շնորհակալությունս Ձեր՝ «Հայ ժողովրդի ազատագրական սլաքարը թուրքական բռնակալության դեմ» գրքի համար, որ բարեհաճել էիք ուղարկել ինձ:

Բարևներով Լ. Մելիքսեթ Բեկ

15

1 ноября 1962

Бухарест

Глубокоуважаемый академик Нерсисян,

Меня беспокоило, что я еще не успел послать редакции журнала статьи, которые Вы от меня ждали. Включая меня в состав Редаклегии журнала, Вы мне сделали честь, за которую я ученым Армении глубоко благодарен и обязан. Я считал нужным впервые сделать более известной за рубежом грандиозную научную деятельность армянских ученых

и добился постоянной рубрики в мире известном журнале, издаваемом Академией наук Герм. Нар. Респ. "Orientalische Literaturzeitung" (гл. ред. проф. Хинце) и в журнале проф. Vittore Pisani в Милано "Paideia", в которых я буду постоянно печатать рецензии и библиографические анализы статей из армянских научных журналов, касаясь только армянских трудов по арменистике в широком смысле (т.е. включая археологию, древн. историю, древн. искусство, т.е. все, что в понимании Запада входит в арменоведение). Первые рецензии я уже послал. Теперь я еще добиваюсь постоянного места в журнале Kratylos, в которой печатаются хорошие рецензии. Проф. Пизани просил меня написать статью о деятельности советских ученых, а специально армянских, в области арменоведения. Над статьей я и работаю теперь. Все это я пишу для Вашего сведения.

Я просил профессора W. Brandenstein-a (Graz., Leechgasse 5, Австрия) — прогрессивный ученый — написать статью для Патма-банасиракан Хандеса. Он обещал мне, и также обещал и Пизани. Я просил и проф. Belardi Walter, Милано, но не получил еще ответа. Что касается меня, я скоро пошлю статью, в которой произведу смотр арменистики в странах нар. демокр. и Запада. Уже имею напечатанных на машинке 40 стр. на русском языке, так что скоро пошлю статью, которая покажет превосходство советского арменоведения в мире и первое место сов. ученых в арменистике мира. Другая статья имеет заглавие: новые вопросы в изучении этногенеза армян. Третья статья имеет заглавие: Вопрос греко-санскрито-армянских соответствий.

Кроме статьи моего бывшего ученика Давида Гижиригяна, который уже послал свою статью, пошлет и моя жена, Глия Дмитриевна Бэнэцян — две статьи из области армянского искусствоведения.

Так как мне необходимо иметь сведения о главных трудах, печатаемых в Сов. Армении, на арм. или русском языке для их рецензии, я обращаюсь к Вам с просьбой сделать нужное, чтобы я получал по крайней мере самые важные труды.

Кончу и прошу Вас глубокоуважаемый академик Нерсисян, поддерживать меня и в будущем Вашей помощью, за которую я Вам очень, из сердца благодарен, она дает мне возможность с уверенностью работать на поприще арменистики.

Ваш искренне преданный
Проф. Влад Бэнэцян

16

25 декабря 1962
Бухарест

Глубокоуважаемый академик Нерсисян,

С наступающим Новым годом 1963, желаю Вам и Вашей семье здоровья и счастья, а Вам лично больших научных достижений. Прошу быть посредником моих чувств глубокого уважения для членов редкол-

легии журнала "Патма-банасиракан Хандес", которым желаю искренне в новом году здоровья, благополучия и научных успехов.

Я не был в 1962 году на высоте Ваших ожиданий, но прошу учесть, что я должен подкрепить ситуацию арменистики и ее преподавание в университете в Румынии и потому должен поддерживать рубрику, назначенную ей в румынских научных журналах, статьями по арменистике. Кроме того, как я Вам уже писал, я уже организовал постоянную рубрику в двух больших, видных журналах и старался привлечь сотрудников из зарубежа для журнала. Кроме W. Brandensteina, видного лингвиста и Vittore Pisani, первый из Австрии, второй из Италии, я еще не получил ответа от двух ученых Италии, одного австрийца и бельгийца. Из Румынии будут сначала сотрудничать проф. Aurel Sacerdotianu, ученик проф. Иорга, Corina Kicotesku, N. Bezikonni, Glia Banateanu, из Венгрии Dr. E. Schütz.

Как я Вам уже писал, я скоро пошлю большую статью, уже написанную на русском языке и наверно перед другими статью о греко-армянско-критских лексикальных соответствиях. После того пошлю статью "Новые вопросы в изучении арм. этногенеза". Если я не мог больше сделать в 1962 году, это потому, что я много болел, месяц в больнице пребывал и теперь готовлюсь к операции.

С глубоким уважением искренне Ваш
Проф. Влад Бэнэцяну

P. S. Забыл написать Вам, это проф. Бранденштайн просил меня написать для журнала в виде большой ноты о его позиции в вопросе армянской этногенезы, которая должно будет рассматриваться как его презентация в журнале.

БЭН.

17

15 մայիսի 1971
Կահիրե

Հարգելի ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյան.

Տեղեկացա բարեկամես առջի՞ ժիրայր Մանասովեն, որ երբ ՄԱԿ-ը այցելած եք ուզած եք զիս անենել, նույնիսկ այցելած եք գրասենյակս. շատ շատ կուզեի Ձեզի հանդիպել, որովհետև քաջ ճանաչեմ և Ձեր ցեղասպանության գործին — շատ պիտի ուզեի Ձեր ուշադրության հանձնել նույն նյութի շուրջ ըրած աշխատանքս — մասնավորաբար ցեղասպանության ուխտի Թ-րդ հոսիվածի առնչութեամբ, ինչպես նաև «նախահարձակում»-ի միջազգային օրենքի սահմանման շուրջ:

Խոսած են ժիրայրին «աօքիւման» ներու հավաքման գործի շուրջ: Ես շատ մը կարևոր նյութեր հավաքած եմ, ու շատ-շատ կարևոր նյութեր, գիտեմ ուր ըլլալը, զանազան երկիրներու գիվանադիաական արխիվներու մեջ, որոնց օրինակները հավաքելու ենք և տեղավորելու Հայաստանի մեջ:

Որոշ ծրագիրներ մշակած եմ – Հայաստան երկու այցելութանս ընթացքին խոսած եմ Սփյուռքի կոմիտեին և Մորուս Հասարթյանի, ստացած եմ նամակ մը պետական արխիվներու տնօրենութեան, որպեսզի իմ մոտ եղածները ղրկեմ – մոտեցումը զգացական է – դրած եմ իրենց, որ այս հարցին մոտենանք ավելի գիտական ձևով:

Այս գործին համար խոսած եմ նաև տոքթ. Վիքթոր Իսրայելյանին և Սփյուռքի ամերիկյան բաժնի պատասխանատու Պարգև Մարտիրոսյանի. և վերջերս կարևոր առաջարկ մը ըրի Վիքթոր Համբարձումյանին – կազմել հանձնախումբ մը Հայաստանն ու Սփյուռքեն այս հարցով հետաքրքրվող տնձերե տեսակ մը Panel որ լուրջ ուսումնասիրե ու տեսակետներու փոխանակութուն մը ըլլա որպեսզի լավագույն ձևով այս գործը գլուխ հանենք: Առաջարկս հետեյալն է. այս ժողովը տեղի ունենա Երևանի մեջ և հրավերը ըլլա Ակադեմիայի կամ Կաթողիկոսի կողմէ և կամ երկուքի միացումով:

Սփյուռքի մեջ այս նախապատրաստական ծրագիրները սկսած են – եթէ այսպիսի Panel մը ստեղծվի կթելագրեմ որ Առվիետ Միութեան Զեր նշանակելիք անհատներու մեջ նկատի ունենաք Յուրի Պարսեղով, Մոսկվա կը գտնվի, այս գործին մեծ օգտակարութուն կրնա ունենալ. ան տարիներ հոս ՄԱԿ աշխատեցավ:

Այսպիսի ժողովի մը ես պարտաստ եմ ներկա ըլլալ և կառաջարկեմ որ նկատի ունենաք նաև Փրոֆ. Վ. Բարսեղյան, Թրոյ, Նյու Յորք:

Շատ պիտի ուզեի որ Փրոֆ. Վիքթոր, Համբարձումյանին հետ խոսեք այս հարցին շուրջ:

Քո Լևոն Քեչիչյան

18

ապրիլ 1998
Երևան

Հարգելի և սիրելի Զավեն

Ստացա Ձեր նամակը, շնորհակալութուն: «Հանդեսի» 1998 թ. առաջին համարը լույս կտեսնի մոտ մեկ ամիս հետո: Կուղարկենք Ձեզ այնքան օրինակներ, որքան Դուք կցանկանաք: Բավական դժվարութուններ կան պարբերականի առաջման կապակցութեամբ, բայց Ակադեմիայի արտաքին հարաբերութունների վարիչ Էվոյանը խոստանում է հաղթահարել այդ դժվարութունները: Ձեզ ողջույններ և լավադույն ցանկութուններ են հղում նաև «Հանդեսի» աշխատակիցներն ու խմբագրութեան անդամները:

Շատ կցանկանանք Ձեզ տեսնել Մայր Հայրենիքում:

Ձերմ բարևներով Մկրտիչ Ներսիսյան

19

Լիսաբոն, 19 մայիս 1998

Հարգամեծար Պրոֆեսոր.

Ուրախութեամբ կարդացինք Ձեր անթվակիր նամակը «Պատմա-բանասիրական հանդեսի» առնչութեամբ: Յավուք ոչ մի կապոց չենք ընդունած

առայժմ Լիսաբոնում: Խնդրում եմ ապագային թղթատարութեան չգիմել, այլ հետադուրեւ մի ուրիշ ապահով միջոց:

Որպեսզի ի վիճակի լինենք դրամական օժանդակութեանները կատարելու, Ձեռքումս սլետք է լինի յուրաքանչյուր տպված համարներից առնվազն 3 օրինակ փաստելու համար մեր դործունեութեանը ի նստատ հանդեսին:

Առողջութեան լավագույն մաղթանքներով և խորին հարգանքներով
Ձեր Սան՝

Ջավեն Եկավյան
Հայկական Բաժանմունքի Տնօրեն

20

19 Հունվարի 1999
Երևան

Սիրելի Ջավեն

Ահա մի քանի ամիս է, որ հիվանդ եմ և գտնվում եմ հիվանդանոցում: Այժմ ուղարկում եմ քեզ իմ «Պատմութեան կեղծարարները» գիրքը: Կարծում եմ, որ կհավանես այն:

Ի դեպ, մեր ակադեմիայի արտաքին բաժնի վարիչը հայտնեց, որ Ձեզ ուղարկել է «Հանդեսի» վերջին համարները: Ստացե՛լ եք արդյոք:

Ձերմ բարեկեցությամբ Մ. Գ. Ներսիսյան